



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ
 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
 ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«13» ապրիլի 2017 թվականի № 49-Ն

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
 ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդածներով, հիմք ընդունելով՝ հանքավայրի աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ Ֆ-392/16 գրությունը և <ԲՖՑ> ԲԲԸ-ի 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 20 դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. <ԲՖՑ> ԲԲ ըկերության (այսուհետ՝ ընկերություն) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Քյորփլիի ֆելզիտային տուֆի հանքավայրից արդյունահանում կատարելու համար թիվ ՇԱԹՎ-29/234 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

- 1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 46 տարով, սահմանելով մինչև՝ 2063 թվականի դեկտեմբերի 16-ը:
- 2) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Քյորփլիի ֆելզիտային տուֆի 16.12.2004թ-ին տրամադրված 319.0 հազար մ³ պաշարով հանքավայրի 01.01.2016թ դրությամբ 192 053 մ³ մնացորդային պաշար ունեցող տեղամասն ընդլայնել՝ 1 656 247 մ³ պաշար ունեցող տեղամասով, ընդհանուրը տրամադրելով՝ 1. X=4568679 Y=8495158, 2. X=4568769 Y=8495147, 3.X=4568846 Y=8495317, 4.X=4568807 Y=8495519, 5. X=4568682 Y=8495462 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ EU-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) տեղամասը, տրամադրելով ընդհանուրը 1 848. 3 հազար մ³ պաշար:

4) հանքի տարեկան արտադրողականությունը՝ սահմանել՝ 1-10 տարիների համար 25.0 հազար մ³, 11-46 տարիների համար 40.0 հազար մ³ պաշար:

2. Ընդերքի գործակալության պեպին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Քյորփլիի ֆելզիտային տուֆի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-234 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր), լեռնահատկացման LՎ-234 ակտի փոփոխությունները և ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինս՝ 10-օրյա ժամկետում փոփոխված պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար:


2) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած:

3) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:



Ս. Արմենյան

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ